Երեսունեւերորդ տարի 1912 № 11 Նոյեմբեր

Խմբագիր-հրատարակիչ՝ **Տիգրան Նազարեան**

ՀՐԱՒԻՐ ՄԵՐ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻՆ

ԱՅՍՕՐԻՆԻՑ ԲԱՑԻՒՄՄ Է **ԱՂԲԻՒՐԻ** XXXI-ՐԴ ՏԱՐԵՇՐՋԱՆԻ 1913 Թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ։

Երեսուն տարեկան **ԱՂԲԻՒՐԸ** *թեւակոխելով իր 31-րդ տարեշրջանը, ճեալու է դարձեալ իբրեւ մի բիւրեղ մանուկ, արհամարհող չարն ու տգեղը և բարեկամ գեղեցկին ու բարուն։* **ԱՂԲԻՒՐԸ**, *որի բիւրեղ ակներն են զիտութիւն ու արուեստը, կարկաչելով հոսում է, շուրջը, հայրենի երկրում, ցողելով շուշան ու մանուշակ, յասմիկ ու համասփիւռ և սրանց բուրմունքով արբեցրած մեր հարազատ սոխակներին ու ծիծառներին՝ օրն ի բուն երգել տալիս անխոնջ արդար աշխատանք՝ հայրենի աւեր վաթանը վերաշինելու ճըշմարտութեան ու ընկերասիրութեան անսասան հիմունքներով։*

1883—XXXI—1913

Հրաւէր ենք կարդում մեր բիւրեղ բիւր մանուկներին, պատանիներին՝ իրանց ընկեր ու բարեկամ **ԱՂԲԻՒՐԸ** *և սրան լծակից* **ՏԱՐԱԶԸ** *տարածել հայութեան բոլոր խաւերի մէջ։*

ԿԱՓՔ

ЛЕВ ТОЛСТОЙ

(Մաճուան II-րդ տարեդարձ)

—

Մի փոքրիկ աղջիկն մի փոքրիկ տղայ իրանց դայեակի հետ սայլակով մէկ գիւղից միւս գիւղն էին գնում։ Աղջիկը 5½ տարեկան էր, իսկ տղան՝ 6. աղջկայ անունը Սոնեա էր, տղայինը՝ Պետեա։ Բայց դրանք քոյր ու եղբայր չէին, այլ հօրեղբօրորդիք, որոնց մայրերը հիւր մնալով իրանց բարեկամի մօտ, երեխաներին տուն էին ուղարկում դայեակի հետ։

Մի գիւղամիջով անցկենալիս սայլակի անիւը կոտրուեց։ Սայլապանը յայտնեց որ անկարելի է ճանապարհը շարունակել, այլ դեռ պէտք է շինել կոտրած անիւը, և որ ինքը շատ շուտով կը շինի։

—Հէնց յարմար ժամանակն էլ է,—ասաց դայեակը.—մենք այնքան երկար ճանապարհ եկանք, որ երեխաները քաղցեցին. նրանց կաթով հաց կ'ուտացնեմ, և ինչ լաւ որ բաւականաչափ կաթ են դրել մեզ հետ։

Սայլը խրճթի առաջ։

Աշնանային օր էր։ Դուրսը բացի ցուրտ լինելուց, այլև անձրև էր գալիս։ Սայլակից իջնելուն պէս դայեակը երեխանց հետ մտաւ հէնց առաջին պատահած խրճիթը։

Խրճիթը առանց ծխնելոյզի էր և ծխից բոլորովին սևացած։ Ամեռը երբ այդպէս խրճթի վառարանը վառում են, դուռը բաց են անում, որի միջով ծուխը դուրս է գնում։ Բացի դրանից խրճիթը շատ կեղտոտ էր և հին. տախտակէ յատակն էլ բազմաթիւ ճեղքեր ունէր։

Երբ մտան խրճիթ, ամենից առաջ Սոնեայի և Պետեայի աչքովն ընկան իրանց հասակակիցները, այն է՝ բոբիկ ոտքով ու կեղտոտ շապկով մի փոքրիկ աղջիկ և ուռած փորով մի փոքրիկ տղայ, որ համարեա մերկ էր։ Խրճթի մի անկիւնում ճօճի մէջ էլ մի տարեկան աղջիկ-մանուկ կար պառկած, որ սաստիկ ճչում էր ու լաց լինում։ Տանտիրուհին՝ որ աշխատում էր մանուկի լացը կտրել, ներս մտնողներին տեսնելուն պէս, թողեց մանուկին և սկսեց միւս անկիւնում դրած սեղանի մօտ նըստելու տեղ պատրաստել նրանց համար։

Դայեակը գնաց սայլակի միջից բերաւ փայլուն կողպէքով մի պարկ։ Գիւղացի երեխաները անչափ զարմացան այդ կողպէքի վրայ և սկսեցին իրար ցոյց տալ։ Դայեակը պարկից հանեց մի շիշ կաթ, հաց և անձեռոցիկ։ Շիշը լաւ փաթաթած լինելով, կաթը բաւական տաք էր մնացել։ Դայեակը մաքուր անձեռոցիկը փռեց սեղանի վրայ և դիմեց երեխաներին.

—Դէ, եկէք, երեխայք, երևի հիմա լաւ քաղցել էք։

Սակայն երեխաները տեղներից չշարժուեցին։ Սոնեան աչքերը յառել էր գիւղացի կիսամերկ երեխաների վրայ և՝ մին մէկին էր նայում, մին միւսին. նա իրա օրումը ոչ այնպէս կեղտոտ շապիկները էր տեսել և ոչ էլ մերկ երեխաները ման գալիս, ու մնացել էր զարմացած։

Իսկ Պետեան՝ մին Սոնեային էր նայում, մին գիւղացի երեխաներին ու չէր իմանում՝ ծիծաղի թէ զարմանայ։

Սոնեան ակնդէտ նայում էր մանաւանդ ճօճի մէջ

պառկած աղջկան, որ բարձրաձայն ճչում էր ու շարունակում լալ։

—Դա ինչո՞ւ է այդպէս ճչում,—հարցրեց Սոնեան։

—Քաղցած է,—պատասխանեց մայրը։

—Ուրեմն մի բան տուէք ուտի։

—Կը տայի, բայց տալու բան չկայ։

—Դոնէ կաթ տուէք։

—Կաթ էլ չկայ,—տխրութեամբ պատասխանեց խեղճ կինը։

—Դէ, եկէք, եկէք,—նորից ձայնեց դայեակը, որ այդ միջոցին հացն էր կտրտում։—Եկէք, ասում եմ, բարկացած կրկնեց դայեակը։

Այս անգամ երեխաները լսեցին նրան և մօտեցան սեղանին։ Դայեակը շշից կաթ ածեց փոքրիկ բաժակների մէջ և տուաւ նրանց։ Սակայն Սոնեան չկամեցաւ խմել, այլ իրանից հեռացրեց կաթով բաժակը։ Պետեան տեսնելով Սոնեայի արածը, ինքն էլ նոյնն արաւ։

Սոնեան մատով ցոյց տալով մանկան մօրը, հացրեց դայեակին.

—Մ՚ըթէ ճիշտ է։

—Ի՞նչը։

—Որ նա կաթ չունի։

—Ո՞վ իմանայ, այդ մեր գործը չէ. դուք ձեր կա՛թը խմեցէք ու հա՛ցը կերէք։

—Ո՛չ, չեմ ուտիլ,—ասաց Սոնեան։

—Ես էլ չեմ ուտիլ,—վրայ բերաւ Պետեան։

—Նրան տուր,—ասաց Սոնեան, աչքը չհեռացնելով փոքրիկ աղջկանից։

—Է՜, բաւական է՝ ինչքան դատարկ բաներ ասացէք,—ասաց դայեակը.—խմեցէք կաթը, թէ չէ բոլորովին կը սառչի։

—Չեմ խմիլ, չէ,—վճռապէս յայտնեց Սոնեան.—եթէ նրան կաթ չտաս, ես տանն էլ ոչինչ չեմ ուտիլ։

—Հիմա դո՛ւք կերէք, իսկ եթէ բան մնաց, այն էլ նրան կը տամ։

—Ո՛չ, ոչ, մինչև որ Նրան չտաս, չեմ ուտիլ։

—Ե՛ս էլ չեմ ուտիլ, ես էլ,—միւս կողմից ասաց Պետեան։

—Դատարկ բաները հնարեցիք ու դատարկ բաները էլ խօսում էք,—ասաց դայեակը։—Մի թէ կարելի է ամենքին էլ հաւասարացնել։ Ո՛ւմ որ Աստուած տուել է, տուել է... Ձեզ, ձեր հայրիկին Աստուած տուել է։

—Աստուած ինչո՞ւ չի Նրանց էլ տուել, — հարցրեց Սոնեան։

—Այդ մասին խօսել-դատելը մեր խելքի բանը չէ. Նրան այդպէս է հաճելի,—ասաց դայեակը և մի բաժակ կաթ ածելով, տուաւ մանկան մօրը, որ խմացնի Նրան։

Մանուկը կաթը խմեց ու սուս կացաւ. սակայն երեխաները չհանգստացան, մանաւանդ Սոնեան չէր կամենում ոչ ուտել և ոչ խմել։

Նա նորից դիմեց դայեակին.

—Դու ասում ես որ Աստծուն այդպէս է հաճելի. սակայն Նրան ինչո՞ւ է այդպէս հաճելի։

—Հաւ բան չես ասում,—զլուխը տարուբերելով ասաց դայեակը։—Այդպէս խօսելը լաւ չէ... Ես այդ մասին հայրիկիդ կ'ասեմ։

—Է՛, ասա՛... Սակայն ես վճռեցի, հաստատապէս վճռեցի. պէտքը չէ, այո՛, պէտքը չէ։

—Ի՞նչը չի պէտքը,—հարցրեց դայեակը։

—Այն՝ որ ոմանք շատ ունենան, իսկ ոմանք՝ քիչ։

—Բայց կարելի է թէ Աստուած դիտմամբ է այդպէս արել,—ասաց Պետեան։

—Այդ անկարելի բան է... Ես ոչ ուտելու եմ և ոչ խմելու...

Այդ միջոցին յանկարծ մինը հազաց վառարանի վրայից ու խռպոտ ձայնով ասաց.

—Է՛, փոքրիկները, փոքրիկները... դուք լաւ երեխաները էք, բայց լաւ չէք խօսում։

Այդ ասողը՝ եր մի ծերունի էր, նորից հազաց։

Սոնեան ու Պետեան նայեցին վառարանի կողմը, որի վրայ տեսան խորշոմած երեսով մի սպիտակահեր ծերունու։

—Աստուած չար չէ, երեխայք,—նորից խօսեց ծերունին.—Աստուած բարի է, երեխայք. Նա ամենքին էլ սիրում է հաւասարապէս։ Բայց որ ոմանք ամեն օր գաթայ են ուտում, իսկ ոմանք մի կտոր ցամաք հաց էլ չունեին ուտելու, այդ բանը Աստուած չի կարգադրել, այլ մարդիկ իրանք են այդպէս արել։ Իսկ մարդիկ նրա համար են այդպէս արել, որովհետև մոռացել են Նրան։

Ծերունու հազը նորից բռնեց, և երբ դադարեց, շարունակեց խօսքը.

—Այո, Աստծուն մոռացել են, ղրա համար էլ այդպէս են արել։ Մոռացել են որ ոմանք ապրում են, իսկ ոմանք չարչարվում օրնիբուն։ Բայց եթէ մարդիկ ապրէին այնպէս, ինչպէս-որ Աստծուն է հաճելի, այն-ժամանակ ոչ-ոք ոչ մի պակասութիւն չէը ունենալ։

—Ուրեմն ինչ պէտք է անել, որ ոչ-ոք ոչ մի պակասութիւն չունենայ։

—Ինչ պէտք է անել,—լրացրեց ծերունին.—պէտք է այնպէս անել, ինչպէս-որ Աստուած է հրամայում։ Իսկ Աստուած հրամայում է՝ ունեցողները պէտք է չունեցողների հետ հաւասար կէս անեն իրանց ունեցածը։

—Ինչ ասացիք, ինչ ասացիք,—հարցրեց Պետեան։

—Աստուած հրամայում է՝ ունեցողները պէտք է չունեցողների հետ հաւասար կէս անեն իրանց ունեցածը։

—Հրամայում է՝ ունեցողները պէտք է չունեցողների հետ հաւասար կէս անեն իրանց ունեցած,—իրարի կրկնեց Պետեան։—Հէնց-որ մեծանամ, այդպէս էլ կ'անեմ։

—Ես էլ այդպէս կ'անեմ,—միւս կողմից վրայ բերաւ Սոնեան։

—Ես քեզանից առաջ յայտնեցի որ այդպէս կ'անեմ,—ասաց Պետեան։—Այո, ես այնպէս կ'անեմ, որ էլ ոչ մի խեղճ մարդ չմնայ։

—Դէ, հերիք հերիք դատարկ բաները խօսէք,—ասաց դայեակը.—խմեցէք մնացած կաթը։

—Չենք խմիլ, չենք խմիլ, չենք խմիլ,—միաձայն ասացին Սոնեան ու Պետեան։—Էէնց-որ մեծանանք, անպատճառ այդպէս կ'անենք։

—Ապրիք դուք, քաջ երեխայք,—ասաց ծերունին ու ժպտաց։—Միայն ափսոս որ ես չեմ տեսնիլ, թէ ինչպէս պէտք է անէք այդ։ Դուք լաւ բան էք մտածել, ուրեմն բարի Աստուածը թող ձեզ թև ու թիկունք լինի։

—Այո, կ'անենք,—նորից կրկնեց Պետեան։

—Հա, այդ լաւ է, շատ լաւ է,—նորից խօսեց ծերունին և՝ համ ժպտաց, համ նորից հազաց։—Երևում է որ ես վերևից պէտք է մտիկ տամ ու հիանամ ձեզ վրայ,—ասաց ծերունին ու այս անգամ աւելի երկար հազաց և երբ հազը դադարեց, դիմեց երեխաներին.

—Տեսէք՝ չմոռանաք, հա. ինչ որ խոստացաք, պէտք է կատարէք։

—Չենք մոռանալ և անպատճառ կը կատարենք,—ասացին երեխաները։

—Ա՛, ուր էր թէ այդպէս լինէր։

Այդ միջոցին սայլապանը ներս գալով յայտնեց, որ սայլակը պատրաստ է։

Երեխաները իսկոյն վեր կացան, շնորհակալութիւն յայտնեցին տանտիրուհուն և մնաք բարով ասելով՝ գնացին իրանց ճանապարհը շարունակելու։

Թարգմ. Հեւոն Մելիք-Ադ.



Բալկանցիներ

Սրանք այժմ սրբազան պատերազմ են սկսել թիւրքական պետութեան հետ, որը ճնշում է իր քրիստոնեայ հպատակներին։

ԹԻԹԵՌԸ

Թելիկ-մելիկ, մի թեթև
Թրռվրռացող թիթեռ եմ,
Ունիմ երկու նաշխուն թև,
Ողջ աշխարհին ես տէր եմ.—

Ամբողջ օրը իմ քէֆին՝
Թրռչկոտում եմ դէս ու դէն,
Ի՜նչ եմ տւել իմ թևին,
Որ չըթռչեմ ուր կուզեմ.—

Ծաղկից-ծաղիկ, խոտից խոտ
Ես անցնում եմ մի շնչում,
Պարտէզներից՝ արտ-արօտ
Մի վայրկեանում եմ թռչում.—

Թելիկ-մելիկ թիթեռ եմ,
Ունիմ երկու նաշխուն թև,
Ողջ աշխարհը դիտել եմ,
Գիտեմ ի՜նչ կայ՝ և վերև...

Ց. Աղաբաբ

ԾԻԾԵՌՆԱԿՆԵՐԻ ՎՐԷԺԸ

(Պատմուածք Մարգարիտ Ասատուրի)

Մենք բոլորս շատ սիրում ենք ծիծեռնակներին։ Մենք վաղուց ցանկանում էինք, որ նրանք բուն շինեն մեր դռան վերևը, ծածկոյթի տակ. և ահա մի անգամ առաւօտեան, գարնան սկզբին, երբ մենք վերադառնում էինք պրօսանքից մեր դաստիարակչուհի օրիորդ Վիլ'սօնի հետ, Նէնսին ասաց.

—Ինձ թւում է, թէ ծիծեռնակները, վերջապէս, ուզում են բուն շինել մեր ծածկոյթի տակ. արդէն մի քիչ կաւ են կպցրել պատին։

—Ո՞րտեղ, ո՞րտեղ, —աղաղակեցինք ամենքս։

—Ահա այնտեղ, հէնց ծածկոյթի տակ,—և Նէնսին մատով ցոյց տւեց տեղը։

Եւ մենք տեսանք, որ իսկապէս պատի վրայ մի քիչ կաւ է կպցրած։

—Դու կարծում ես, որ այդ բանը ծիծեռնակնե՞րն են արել,—կասկածելով հարցրի ես։

Բայց հէնց այդ միջոցին մեր վրայով թռչելով անցաւ մի ծիծեռնակ և նոյն տեղը պատին կպցրեց էլի մի քիչ նոր կաւ։

—Հապա, տեսա՞ք,—բացականչեց Նէնսին։—Ի՞նչ կասէք հիմա։

Ամենքս նստեցինք և սկսեցինք դիտել ծիծեռնակներին։ Մէկը կամ միւսը նրանցից թռած գալիս էին և ճանկերով ու թևերով սեղմելով պատին՝ ամեն անգամ մի քիչ կաւ էին աւելացնում իրանց բնի վրայ։

Հետևեալ երկու օրը մենք մեր ազատ ժամանակի մեծ մասը անցկացրինք պատուհանի մօտ։ Շատ հաճելի էր տեսնել, թէ ինչպէս է շինւում բունը։

Ծիծեռնակները շարունակ ճռւողում էին աշխատելու ժամանակ, կարծես բնի մասին էին խօսում, խորհրդակցում էին միմեանց հետ։

Վերջապէս, բունը ամբողջովին ծեփեցին, վերջացրին. մնացել էր միայն վերջացնելու այն անցքը, որով պիտի ներս ու դուրս անէին թռչունները։ Ծիծեռնակները ճրուողում էին և պատրաստ էին անում նրա շուրջը, կարծես ուզում էին տեսնել—պակաս բան հո չի՞ մնացել։

Բայց որովհետև ամեն բան կարգին էր, նրանք թռան գնացին ճանճ բռնելու, որ ուտեն և հանգստանան հետագրաթելի վրայ։

Առաւօտեան բնի մէջ ոչ մի այնպիսի բան չըկար. բայց ժամը 12-ից յետոյ, երբ մենք գնացինք նորից տեսնելու բունը, նրա մէջ մի ծղոտ էր երևում։

—Այս ինչ է նշանակում,—ասացի։—Ես չըգիտէի, որ ծիծեռնակները իրանց բնի մէջ ծղոտներ են փռում։

—Նրանք երբէք այդ բանը չեն էլ անում,—լրջօրէն և մտատանջութեամբ նկատեց Նէնսին։

—Դու այդպէս ես կարծում...—շնչասպառ կերպով բացականչեց Դօրան։

—Ի հարկէ,—պատասխանեց Նէնսին։

—Ի՞նչ էք ուզում ասել, Նէնսի,—հարցրեց օրիորդ Վիլ'սօնը։

—Որ ճնճղուկներն են բնի մէջ ծղոտներ փռում։

—Մի թէ ճնճղուկը կըխլէ ծիծեռնակի բունը,—բացականչեց Մօլլին։

—Երբեմն նրանք այդպէս են վարւում,—պատասխանեց Նէնսին։

—Հիմա ի՞նչ անենք,—հարցրեց Դօրան։

—Իսկ եթէ այստեղ կանգնենք և փախցնենք ճնճղուկներին,—առաջարկեցի ես։

—Ո՛չ մի օգուտ չի լինի դրանից,—ասաց Նէնսին։—Մէկ էլ որ ամբողջ օրը չի կարելի այստեղ կանգնել։

—Եթէ դուք ինձ բարձրացնէիք, օրիորդ Վիլ՛սօն, ես այնտեղից դուրս կը հանէի ծղոտը,—խնդրեցի ես։

Օրիորդ Վիլ՛սօնը ինձ բարձրացրեց, և ես քաշելով՝ հանեցի ծղոտները, որոնց հետ դուրս ընկան նաև փետուրներ։

Բայց և այնպէս մենք շատ անհանգիստ էինք։ Ճընճղուկներին յաղթելը այնքան էլ հեշտ բան չէ։

Պարապմունքներից յետոյ ամենքս վազեցինք սեղանատան պատուհանի մօտ։ Մենք սկսեցինք նայել պատուհանից և շուտով տեսանք, որ մօտ թռաւ մի փոքրիկ յանդուգն որձակ-ճնճղուկ, որը բերանին փետուր ունէր բռնած. նա ներս մտաւ բնի մէջ, ինչ-որ բան արաւ այնտեղ և դուրս թռաւ բնից. ապա թռաւ եկաւ մարիճնճղուկը. նա իր կտուցով բռնած ունէր մի երկար ծղոտ, որ իր հետ ներս քաշեց բնի մէջ և սկսեց պատյտ գալ այնտեղ, մինչև որ ծղոտը ամբողջովին տեղաւորեց բնի մէջ։

Այդ ժամանակ վերադարձան ծիծեռնակները,

Նրանք շեշտակի կերպով թռչում էին դէպի իրա՛ց բունը և յուզած ճուողում էին այդ միջոցին։ Ճնճղուկներից մէկը, մարին, ծակից հանել էր գլուխը և փետուրները ցցել, իսկ որձակը, նոյնպէս ցցած փետուրներով, թռչելով՝ յարձակւում էր ծիծեռնակների վրայ և կտուցով խիստ հարուածներ տալիս նրանց։ Յեղձ ծիծեռնակները թափահարեցին իրանց թևերը, բարձր աղաղակեցին և պատսպարուեցին ծածկոյթի տակ։ Ճնճղուկները տիրեցին նրանց բնին,—ճնճղուկի կտուցը անհամեմատ աւելի ուժեղ է՝ քան ծիծեռնակինը։

—Բայց և այնպէս ես պիտի բնի միջից վռնդեմ այդ չար ճնճղուկին,—ասաց Դօրան։

Նա մի աթոռ բերաւ և բարձրացաւ վրան, մարին իսկոյն դուրս թռաւ։ Հէնց որ Դօրան հեռացրեց իր աթոռը, ծիծեռնակներից մէկը ներս թռաւ բունը և սկսեց նրա մէջ պտոյտներ անել, դուրս թափելով այնտեղից փետուրները և ծղոտները. ապա նա սկսեց ուրախ ուրախ կանչել ճուռողել։ Մենք բոլորս շատ ուրախացանք։

Բայց հետևեալ առաւօտեան, երբ մենք հաւաքւեցինք նախաճաշելու, տեսանք որ ճնճղուկները նորից տիրել են բնին։ Եւ մենք վճռեցինք, որ անօգուտ է փորձել որև է բան անելու դրա դէմ։

Ճաշից առաջ մտնելով սեղանատունն՝ մենք նկատեցինք, որ ծիծեռնակները ճախրում էին մեր պատշգամբի շուրջը և կարծես խօսում էին միմեանց հետ։ Սկսեցինք սպասել, թէ ինչ պիտի լինի։

Մենք նկատեցինք, որ որձակ-ճնճղուկը գտնւում է բնի մէջ և եռանդով տեղ է պատրաստում այնտեղ, իսկ մարին փետուրներ ու ծղոտներ էր բերում։ Բայց ահա նորից երևացին ծիծեռնակները. երկուսն էլ կտուցներում կաւ ունէին։

Նրանք շեշտակի նետւեցին ծածկոյթի տակ, և ամեն մէկը իր կտուցի կաւով ծեփեց բնի անցքը։

Ճնճղուկը դուրս հանեց գլուխը և ուզեց կտուցով հարւած տալ նրանց, բայց բնից դուրս չը թռաւ. մարին նոյնպէս ներս թռաւ նրա մօտ։

Յետոյ ծիծեռնակներից մէկը թռաւ—գնաց, իսկ միւսը, սպասողական դրութիւնում, սկսեց թռչել բնի շուրջը. վերջապէս, առաջինը վերադարձաւ մի կտոր կաւով, մօտ թռաւ բնին և նրանով ծեփեց բնի անցքը։ Հիմա նա միայն սպասելու, իսկ միւսը թռաւ՝ կաւ բերելու, որով իր հերթին նոյնպէս ծեփեց անցքը։

—Ի՞նչ են անում նրանք,—հարցրի ես։

—Չեմ հասկանում,—պատասխանեց Նէնսին։—Ինչ որ է, շատ զարմանալի է։

Ծիծեռնակները շարունակում էին իրանց գործը, և անցքը աւելի ու աւելի փոքրանում էր։

—Նրանք չ'ըն ուզում արդեօք ճնճղուկների ելքը արգելել,—բացականչեց Դօրան։

—Ճիշտ որ,—բացականչեց Նէնսին։

Այդ ժամանակ մենք կանչեցինք մեր ծնողներին և օրիորդ Վիլ'սօնին, որ նրանք էլ տեսնեն, թէ ինչ է կատարւում, և նրանք ամենքը ասացին, որ երբէք այդպիսի բան չեն տեսել։ Ակներև էր, որ ծիծեռնակները այդպիսի նպատակ ունեն, իսկ ճնճղուկները մինչև հիմա դեռ ոչինչ չէին կասկածում։

Մենք խնդրեցինք, որ մեզ ազատեն պարապմունքներից, որ կարողանանք դիտել այդ հետաքրքրական երեւոյթը։

Թէ հայրիկս և թէ մայրիկս ասացին, որ դա մի այնպիսի անսովոր բան է, որ չը պիտի աչքաթող անել։

Այդ պատճառով ճաշից յետոյ ամբողջ ժամանակ մենք ազատ էինք։

Ծիծեռնակները շարունակում էին իրանց գործը. մէկը ճոռում էր իբրև պահնորդ, իսկ միւսը թռչում էր՝ կաւ բերելու։ Վերջապէս ճնճղուկներն էլ նկատեցին, որ ինչ-որ բան է կատարւում։

Որձակ-ճնճղուկը դուրս հանեց գլուխը և ուզում էր դուրս թռչել բնից, բայց ծիծեռնակը յարեց բնի ծայրն և իր թևերով ճնճղուկին յետ մղեց բնի ներսը։ Դրանից յետոյ ճնճղուկները էլի մի երկու անգամ փորձեցին դուրս թռչել, բայց նրանք հիմա այնպէս վախեցած էին, որ այլևս վճռողաբար չէին գործում։

Ժամը չորսին մօտ ամեն բան վերջացել էր։ Ճնճղուկները արդէն ամուր կերպով փակուած էին կաւով ծեփած բնի մէջ,—իսկ նրանք՝ լիովին բաւարարութիւն ստացած և ցանկապատի վրայ թառած՝ ինչ-որ բան էին ճռւողում միմեանց։

—Սակայն ես երբէք չէի կարող հաւատալ, որ թըռչունները կարող են այսպէս մտածած կերպով վրէժ առնել,—ասաց Նէնսին։

—Ճնճղուկների համար դա լաւ դաս կը լինի,—ասացի ես։—Զղջալի գողեր։

—Բայց հիմա ինչ պիտի անեն ծիծեռնակները։ Մինթէ նրանք պիտի թողնեն, որ ճնճղուկները սովամահ լինեն,—հարցրեց Մօլլին։

—Նրանց ինչ գործն է,—ասաց Դօրան։—Բայց և այնպէս շատ անգութ բան է։

—Ինձ էլ թւում է, որ ծիծեռնակները շատ անգութ վարուեցին,—նկատեց օր. Վիլ'սօնը։—Իսկ հիմա թառել են ցանկապատի վրայ և ուրախանում են իրանց բռնած գործով։

—Այո, մեծ անարդարութիւն էր, որ ճնճղուկները խլեցին ծիծեռնակների տնակը, որ այնպէս խնամքով շինել էին նրանք,—ասաց Նէնսին.—բայց և այնպէս դրա համար նրանց մահուան դատապարտել—շատ սոսկալի է։

—Բայց նրանք արժանի են, թող մի լաւ վախենան,—նկատեցի ես։—Թողնենք, որ նրանք այդպէս ճան, մինչև որ հայրիկը տուն վերադառնայ. թող նա էլ տեսնէ, ապա կազատենք նրանց։

—Այո, դա նրանց համար լաւ դաս կըլինի,—ասաց Նէնսին։

Հայրս վերադարձաւ շատ յոգնած, և մենք մտածեցինք, որ աւելի լաւ է թռչունների մասին յետոյ պատմենք, երբ նա թէյը կը վերջացնէ։

Թէյից յետոյ հայրիկին մենք դուրս կանչեցինք, որ գայ նորից տեսնէ բունը։

Ծիծեռնակների արարմունքը տեսնելով նա զարմացաւ։

—Ի՞նչ ես կարծում, հայրիկ, նրանց բաց թողնելու ժամանակը չէ՞,—հարցրեց Դօրան։ Չէ՞ որ սարսափելի բան է սովամահ լինելը։

—Վաղուց է, որ անցքը փակել, վերջացրել են,—հարցրեց հայրս։

—Մօտ երկու ժամ կը լինի,—պատասխանեց Նէնսին։

—Ուրեմն իզուր էք վախենում, որ նրանք սովամահ

կը լինեն,—նրանք, երևի վաղուց արդէն մեռել են։ Բունը այնպէս ամուր է դոցւած, որ նրանք՝ առանց օդի՝ պիտի որ շնչահեղձ լինէին մինչև հիմա։

—Ո՜հ, հայրիկ, մի՛թէ ճիշտ ես ասում,—բացականչեց Մօլլին ու սկսեց լաց լինել։

—Հիմա կըտեսնենք,—պատասխանեց հայրս։ Եւ իր գըչահատով մի անցք բացեց բնի մէջ, ձեռքը ներս կոխեց այնտեղ և մէկը միւսի յետևից դուրս հանեց ճնճղուկնեըին. բայց նրանք արդէն մեռած էին։

Մօլլին սկսեց աւելի ևս բարձր ձայնով լաց լինել։

—Մի՛ լայ, գառնուկս,—ասաց հայրս։—Նրանք շատ չեն տանջւել, մի քանի րոպէում շնչահեղդ են եղել. մէկ էլ՝ չէ՞ որ իրանք էին մեղաւոր։ Ինչի՞ ուրիշի բունն էին մտնում։

—Ես կարծում եմ, որ ծիծեռնակները նորից կը վերադառնան և կըտեղաւորւեն իրանց բնի մէջ,—ասացի ես։

Բայց ծիծեռնակները չը վերադարձան։ Եւ բունը այդպէս էլ մնաց դատարկ ամբողջ ամառը։

Թարգմ. Ջ. Տ.—Գ.

ԿԱՐՈՂՈՒԹԻՒՆ

Կեանքս այսօր, որ ձեռիս լինէր
Այժ իշխանութիւն
Հեռի այս ունայն աշխարհիկ կեանքից
Իր նենգ ու պատիր նախանձ անէծքով.
Եւ այդ բարձրութեան վրայ ես կանգնած՝
Բաղդաւորութեան ուրախ քրքիչներ
Միայն լսէի և հոգիս ցնծար։

Կցանկանայի այնպիսի մի այժ,
Որ ես լսէի խսպառ արմատից
Ամենայն չարիք և բաղդը մոռցած
Անբաղդ մարդկերանց
Ես ներշնչէի թէ յոյս և թէ բաղդ
Եւ երկրի վրայ, փշի փոխարէն,
Վարդ բացնէի և այդ վարդերի
Բուրմունքը դէպ ինձ
Ինչպէս խունկ, կնդրուկ վերսլանային,
Իսկ այդ բարձունքից
Ես լիաբուռն նոր բաղդ, նոր ծաղկունք
Անբաղդ մարդկերանց աջ ձախ սփռէի։

Գ. Ե. Դել.

Փոխ. Կ. Կ. Ս.-Շահ.

Հեթոսուհի

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՆԻ

ԿՐԿՆԱԴԱՐՁԱՆՔ

Հարաւային Անդրկովկասի մի քանի վայրեր, կարելի է ասել, իդէալական են կլիմայի, հողի և ջրի վերաբերմամբ. դրանց համար կարելի է գործ ածել բիբլէական խօսքը Աւետեաց երկրի համար ասած, թէ նրանք կաթն ու մեղր են բղխում։

Այդ եդեմական դրախտավայրերից կան և Արցախում կամ Ղարաբաղում ու ընդգրկում են նրա Դիզակ և Վարանդա գաւառների հարաւային մասը, այսինքն՝ Շուշուց դէպի հարաւ, արեւելք ընկած սարերի արևգունի լանջերը, միացած այն արգաւանդ տափաստանների հետ, որոնք հասնում են մինչև Արաքս գետը։

Նկարագրածս վայրը Արաքսի հովտի, հռչակաւոր Մուղանդաշտի ամենավերին մասն է, հիւսիսից բոլորորին ապահովուած սարերով, որի շնորհիւ զարմանալի մեղմ կլիմայ, թեթև և աննկատելի ձմեռ ունի։ Բուք, բորան, խիստ քամիները ամենևին չըկան, այլ զով, մեղմ զեփիւռ, աննշան, կարճատև ձմեռայ ընթացքում, որ աւելի աշնան է նմանուում. նախիրը և հօտերը միշտ դուրսն են լինում։ Երբէք մշուշ և մառախուղ չի լինում այստեղ, յարմար շինած սենեակում ձմեռն առանց վառելիքի կարելի է ապրել։ Ամառը արևում թէև ջերմաչափը հասնում է 40 աստիճանի,

բայց անվճաս է, որովհետև ճահճոտ տեղեր չկան, մլաք, մոծակ, ջերմուտենդ չկան։

Դիզակի և Վարանդայի սարերի անթիւ, անհամար բիւրեղ աղբիւրներից գոյանում են մի քանի վճիտ գետեր, որոնք այս տափաստանները կտրելով, հոսում են դէպի Արաքս. դրանք լիքն են համադամ ձկներով։ Այս հովտի վերին կողմի սարերի երբեմնի ճոխ անտառները այժմ սպառելու վրայ են, ուստի և սրանց մէջ մի ժամանակ վխտացող որսը՝ փասիան, միրհաւ, կաքաւ, սալամբ, քարայծ, այծեամ, եղնիկ և այլն այժմ շատ նուազ են և սուղ։

Այգինները հետզհետէ բազմանում են, մանաւանդ թուրքի, առատ օղեհանուքեան համար և խնձորենի, որոնց բերքը շատ յաջող վաճառաշահում է։

Տափաստանները բացառապէս խաշնարած թուրքերի ձեռին են։ Նրանք բնակարաններ չունեն, այլ վրանաբնակ են կամ գետնափոր հողետներում են ապրում, մանաւանդ թեթև ձմեռայ երկու ամիսը. ամառը իջարկէ չեւում են սարերը։ Սակայն անուշադիր չէը կարելի թողնել այս գերազանց բերրի հողերը, ուստի նոր գաղութների հիմնարկութեան մի շարք է սկսւած դաշտավայրի վերին մասում, Վարանդայի սարերին մօտաւոր տափարակներում։ Այդ նորեկները վերին աստիճան գոհ են և ուրախ իրենց վիճակւած արգասաւէտ հողերով, սկսած են արդիւնաւէտ, բազմազան մշակութիւններ, օգտւելով քանքաններով հանած հրաշալի, առատ ջրերով։

Անշուշտ այս տեղերը պիտի ծաղկին փառաւորապէս, մանաւանդ որ չի ուշանալ, երբ երկաթուղին Հայկիկաբուլից կը դայ, ակոսելով այս արգաւանդ հողերը, կանցնի, կը միանայ Հին Ջուղայի գծին։

Յիշածս գաղութը ոուս գիւղերից նշանաւոր է կարեագինը, ուր հաստատւած է գաւառական վարչութիւնը և փոքրիկ քաղաքի տպաւորութիւն է գործում։ Գաղթականները բացառապէս գիւղատնտեսութեամբ են պարապում և առհասարակ ամենևին չեն անում. նրանց գիւղերի խանութպանները հայեր են կամ թուրքեր։

Այն վայրը, որ այս երկտողով ուզում ենք տեղագրել, սկըսւում է Ջերրայիլից, որ մի մեծ թրքական աւան է Արաքսի հրուչակաւոր Ուռւդաֆերին կամուրջի մօտ, մինչև Աղդամ անւանի, մեծաւաւրած, այգեստան գիւղը. այդ միջոցի երկարութեամբ ընկած ոչ բարձր սարերի լանջերում կան մի շարք հայ գիւղեր, որոնք թուրքերի երեսից ամենևին չեն կարողանում օգտւել տափարակի պտղաւէտ հողերից և աշխատանքի համար ստւար

թւով դիմում են Բագու, ուր և գտնում են նշանաւոր յաջողութիւն։ Սակայն ապագայ երկաթուղին հնարաւորութիւն և ապահովութիւն կըտայ սրանց շահիլ իրենց հայրենի երկրի այս հարուստ միջավայրից։

Լրացնելու համար այս փոքրիկ ուրւագիծը, յիշենք այստեղի սքանչելի բնութեան մի աչքի ընկնող երեւոյթը։

Ամառւայ ջերմ եղանակներն անցնելուց յետոյ, երբ սեպտեմբերի սկզբին գալիս են առաջին անձրեւները, հողի ուժեղ բերրիութիւնից և արեի դեռ ևս բաւական տապից սկսւում է նոյն տարւայ մէջ երկրորդ գարուն, այս է կրկնագարունք. հարիւրաւոր ծաղիկներ փթթում են, խոտերը թաւ բարձրանում են մինչև կէս արշին. շատ ծառերի մատղաշ ճիւղերի վրայ երեւում են տերև ու ծաղիկ։ Ես ինքս երեք տարի այս վայրերում եղած ժամանակ հոկտեմբերի 17—25-ին մանուշակ եմ տեսել բացած և քաղել եմ։ Այս կրկնագարունքին ծնում են մաքինները (էգ ոչխարները), որ ուրիշ տեղեր կատարւում է միայն ապրիլին։ Աշնանամուտ երկարատև օրերին յաջորդում է կարճատև, գրեթէ անձիւն ձմեռը։ Յունւարին, Զրօրհնէնքից յետոյ, դարձեալ գարնան նշաններ են երեւում։ Ահա մի դիւթիչ անկիւն մեր հայրենի աշխարհում, ուր մի գարուն յաջորդում է միւսին։

Ն. վ. Տէր-Աւետիքեան

Մահ յրտեսիլ

Ա Խ Ա Ր Ա Ց Ք

(Պատմական քերթված)

(Սկիզբը Ազբիւր № 9)

Գ. ԳԼՈՒԽ

Լոփնաս գետի ափերի մօտ՝ Աղուանների աշխարհում,
Ուր չորս կողմից շղթայաձև սեգ սարերն են բարձրանում,
Սակաւաթիւ հայոց քաջեր պարսիկների դնդի դէմ
Մահ պատճառող սլաքներով կռիւ են բացել դէմ ու դէմ.
Հեռու թողած դաշտն ու արօտ, անմահական ջրերը,
Ո՛ւմ համար են արիւն թափում մեր անձնուէր քաջերը.
Ինչո՞ւ թողած խեղճ մայրերին սրտաճմլիկ վշտերում,
Արիւնշաղախ թաւալում են այս հեռաւոր դաշտերում։

II

Հայի՛ բազուկ, քանի՞ ազգեր դո՛ւ օրհասից փրկեցիր,
Քանի՛ անգութ, դաժան մարդիկ բռնանալուց զրկեցիր.
Չհարցնելով կրօն, լեզու, պաշտպան եղար անզօրին,
Եւ կանչեցիր ահեղ մարտի ժամնտ բռնակալ հզօրին։
Եւ դու այսօր սուրը վերցրած՝ հեռու, օտար աշխարհում
Չար պարսկի դէմ աղուաններին ձեռք ես տալիս, պաշտ-
պանում։
Ահա թշուառ պարսիկները՝ ահաբեկուած ու վհատ,
Փախան հեռու՝ իրանց արեամբ ողողելով կուի դաշտ։

III

Պռուի հերոսն իւր փոքրաթիւ կարիճների շրջանում
Ոգևորուած, սուրը ձեռքին՝ կանգ է առել և հրճւում.
Վարդանն է դա, Մամիկոնեան անահ, անդող կորիւնը.

Նորա սրտում եռ է գալիս նախնեաց անբիծ արիւնը.
Նա է տալիս իւր քաջերին շունչ ու ոգի կռուի մէջ,
Նա է պահում հայրենիքի սիրոյ հուրը միշտ անշէջ։
Անօգնական աղուաններին նա դուրս եկաւ օգնելու,
Թշուառների փրկութիւնը իւր արիւնով գնելու։

IV

Բայց ա՛խ, յանկարծ Քաջի առաջ մի գուժկան է դուրս գալիս
Եւ վարդանին իւր հայրենեաց աւերմունքի գոյժ տալիս.
Եւ ո՛ւմ ձեռքով, ո՛վ Տէր Աստուած... Սիւնեաց իշխան վասակի,
Որ նոցա հետ ուխտ էր արել՝ արժանանալ պսակի.
Հայաստանը գոռ թշնամու ճիրաններից փրկելու,
Ազատութեան սիրոյ համար Հայոց դաշտեր ներկելու։
Ինչպէս անդրի—յաղթ, վայելուչ, սուրը ձեռքին, քարացած՝
Լռիկ, անշարժ կանգ է առել Քաջ Վարդանը զարմացած։

V

Տաճնապալից յուզմունքները հարուածեցին մեր Քաջին.
Նա տեսնում է մի անյատակ և մութ անդունդ առաջին.
Տխուր ողբով իւր սիրելիքն այն եզերքից կանչում են,
Եւ յուսահատ լաց ու կոծով նորա հոգին տանջում են.
Բայց անցնելու հնար չկայ. նա կանգնել է շուարած,
Ախ է քաշում, արցունք թափում իւր աչքերից խաւարած։
Բայց մթութեան սև քօղի տակ աղօտ լոյս է նա տեսնում.
Եւ մեր Քաջը կանգ է առել, սպասո՛ւմ է, սպասո՛ւմ...

VI

«Հասա՛ն, եկա՛ն», հեռուից գոռաց այնտեղ վազող այլ գուժկան,
«Ե՛ւ պարսիկները, և՛ աղուաննե՛ր և՛ հայերը դաւաճա՛ն»...
Ուրացողի գաղտնիքները նորա համար պարզուեցան.

Հւ մեր Քաջի վերջին յոյսերն օդում՝ վերև ցնդուեցան։
Նա մենակ է... աղուաննները բաժանուել են Վարդանից...
Ապերախտնե՛ր. ո՛վ է ներկել այս դաշտերը արնալից.
Եւ ո՛ւմ համար արիւն թափեն մեր անձնուէր քաջերը.
Ի՞նչ էք տեսնում, մի բա՛ց արէք ձեր կուրացած աչքերը։

VII

Տեսէ՛ք, տեսէ՛ք, փրկութիւնը այս դաշտում էր նոր ծնւում

Ուր քաջերի արնաշաղախ դիակներն են թաւալում.
Եւ դո՛ւք, անմիտ ապերախտնե՛ր, ձեր թշնամուն միացաք
Եւ անգթօրէն ձեր անձնուէր բարերարի դէմ եկաք։
Իսկ դո՛ւ, Վասակ, հայրենիքիդ նենգող, սատրիչ դաւաճան,
Դու ի՞նչ խարդախ խորհուրդներով գործ դրեցիր ճիգ ու ջան՝

Քո անպաշտպան հայրենիքի միութիւնը խախտելու.
Սո՛ւր նախանձ, Մամիկոնեան սէգ առիւծի՛ն յաղթելու։

VIII

Այդ դեռ քիչ է. երազում ես գահի մասին, դաւաճան,
Եւ զոհում ես այդ ցնորքին՝ ազգ, հայրենիք, ամեն բան.
Օ՛, շատերն են այդ ձգտումով հանդէս եկել, ով Վասակ,
Բայց թողել են պատմութեան մէջ նզովքների յիշատակ...
Վարդանն ահա ուշքի եկաւ, տուեց խմբին հրաման,
Մռնչացող փոթորկի պէս թշնամեաց դէմ սլացան։
Կռուողների սուր ճիչերից սարեր, ձորեր թնդացին,
Նժոյգների սմբակները դաշտն ու արօտ քանդեցին։

IX

Եւ Վարդանի քաջ ընկերներն իրանց յոգնած ձեռքերով
Գլորում են ժանդ թշնամուն, կռուի դաշտը ներկելով։
Բայց քաջերի տէգ ու սուսեր հարուածելով բթացան,
Իսկ թշնամիք պակսելու տեղ՝ կամաց-կամաց շատացան։
Տաղնապալից այդ վայրկեանին հեռուից լսուեց ճիչ ու ձայն։

Իշնչ, լեռներում նոցա համար անթիւ զօրքեր պահուած կան.
Էլ Վարդանին յոյս չմնաց. պարսիկներին վերջ չկար.
Իսկ քաջերի թիւը քիչ էր. օ, էլ չկար ոչ մի ճար։

X

Հեռուից տեսան դաշտի վերայ հեծուորների մի բանակ.
Նոցա մէջ տեղ ծածանւում էր մի հայկական դրօշակ,
Մեր քաջերը ոգի առան. Ներշապուհն էր իւր զօրքով,
Նա բերում էր կորիճներին ազատութեան յոյս, կորով։
Իսկ թշնամիք սարսափահար յետ են դարձել ու փախչում,
Անտառների, ձորերի մէջ տեղ են գտնում ու թագչում.
Բայց քաջերի մեծ բանակը հալածում է նիզակով,
Կանաչազարդ արօտները ծածկւում են դիակով։

XI

Փախիր, Վասակ. սարեր, ձորեր աչքեր առան, քեզ տեսան.
Դու բոլորին քո պատկերով զզուեցրիր, չար գազան.
Գնա, գնա արքայիդ մօտ, պարգիր նորան մեր գաղտնիք,
Եւ դրոշմած քո ճակատին ուրացութեան սև կնիք՝
Կրկին դարձիր զօրքերն առած և աւերիր ամեն բան.
Թագաւորէ քանդուած երկրում՝ ինչպէս մի բու գիշերուան։
Ողորմելի, այդ յոյսերն են քեզ թև տալիս, նենգաւոր.
Կեցցեն, ապրին, Հայաստանի արժանաւոր թագաւոր...

Ե. ԳԼՈՒԽ

I

Մուխ գիշերուայ խաւարի տակ՝ Տղմուտ գետի ձախ ափում,
Ազատութեան երգն հնչելով հայ զօրքեր են հաւաքւում.

Այնտեղ հասան ամեն կողմից մեր կարիճներն անձնուէր.
Միայն Սիւնեաց մատնիչ վասակն այդ միջոցում այնտեղ
չէր։
Կանաչազարդ դաշտի վերայ, անուշաբոյր ծաղկանց մէջ,
Ուր կարկաչող քաղցրիկ առուն միշտ անում է ել և էջ,
Հեռուից եկող հայոց քաջերը շարան-շարան նստեցան,
Եւ խարոյկները դաշտի վերայ՝ նոցա շուրջը վառուեցան։

II

Իսկ երգերի քաղցրիկ հնչիւնն հով զեփիւռին միացած՝
Առաջ անցաւ դէպի հեռուն՝ հայոց սարեր սիգապանծ։
Այդ միջոցին նոցա հանդէպ՝ Տղմուտ դետի աջ ափում,
Արիւնարբու պարսիկների զօրքերն էին մրափում.
Բայց քաջերի ազատութեան հնչիւններից սթափուած՝
Դիւաղադար, քունն աչքերում շուտ վերթռան զարհուրած.
Դողդողալով ճպռոտ աչերն այս ու այն կողմ պլշեցին
Եւ փղերի երամակներն ափին մօտիկ քշեցին։

III

Էլ չի լսւում մեր բանակից ազատութեան երգի ձայն.
Պատերազմի ժամը մօտ էր, մեր քաջերը վեր կացան.
Եւ դաշտի մէջ՝ միմեանց մօտիկ, աչերն ուղղած դէպ
երկին,
Լռիկ, մնջիկ և թախծալից աղօթում են սրտագին։
Ահի, դողի զգացումը պահած ազնիւ սրտերում՝
Մեր քաջերը հաղորդութեան բաժակին են մօտենում.
Ճաշակելով Քրկչի մարմինն՝ յետ են դառնում դէպ բանակ,
Ազատութեան կռուի համար պատրաստում են սուր, նիզակ։

IV

Երբ յաղթ լերանց սէգ գագաթին կռուի մտան մուքն ու լոյս
Եւ արծաթի վահանն ուսին բացուեց յաղթող արշալոյս,
Ոտքի ելան մեր քաջերը՝ զէնքերն առած ու պատրաստ

Եւ սանձեցին նժոյգները՝ հուժկու, վազուկ և անսասան։
Այդ միջոցին հսկայի պէս՝ նստած մի ժիր երիվար,
Դուրս է գալիս Քաջ Վարդանը՝ Հայոց գնդի զօրավար։
Նա մատների թոյլ շարժումով նշան տուեց զօրքերին,
Եւ սլացան Տղմուտ գետով՝ սուրը բռնած ձեռքերին։

V

Պարսից գունդն էլ գրոհ տուեց. ինչ սոսկալի տեսարան.
Սրընթաց գետի ալիքներում միմեանց հանդէպ դուրս եկան.
Կռուողների սուր ճիչերից սարեր, ձորեր դողացին.
Արնոտ սրերն արևի տակ ահեղ փայլով շողացին։
Բայց թշնամիք շուտ թուլացան, փախուստ տալով աջ ափը.
Անբաղդներին պաշարել էր դաժան մահուան սարսափը.
Իսկ հայերի քաջ բանակը նրանց յետևից սլացաւ
Եւ ճօճելով սուր ու նիզակ՝ արիւնահոս գետն անցաւ։

VI

Կանաչազարդ դաշտն ու արօտ կարմիր արեամբ ներկուեցան.
Վառ ծաղիկները, խոտ ու կանաչ սիրուն փայլից զրկուեցան։
Ուր սոխակի նուագներից զմայլում էր բնութիւն,
Արդ լսւում է հասատ փողերի որոտընդոստ ճռնչիւն,
Ուր սիգահեր հայ աղջիկն էր օրօրուելով մանգալիս,
Այնտեղ փիղը իւր անճոռնի ոտքերով է կոխ տալիս.
Ուր որ սրնգի քաղցր ձայնը ոչխարներն էր մակաղում,
Դիակների անթիւ կոյտեր արեան մէջ են շաղախւում։

VII

Ազատութեան սէրն է այդպէս հայ քաջերին բորբոքել,
Որ չուզելով բռնակալի անգութ լծան տակ չոգել,
Սուրը ձեռքին ելան նոքա հայրենիքը փրկելու,
Զար և դաժան սատանային բռնանալուց զրկելու։
Նշանաբանն հայ զրօշի՝ փրկութիւնն է հայրենեաց.
Հայ զինուորի անվախ սիրտը այդ ոգով է միշտ սնուած։

Թող մռնչայ գոռ փոթորիկ, թափուռեն շանթերը, կայծ, որոտ՝
Նա պիտ կանգնէ սուրը ձեռքին՝ կռուի դաշտում արիւնոտ։

VIII

Վերջալոյսի վառ շողերը լերանց յետև թագ կացան.
Դեռ կռւում են Աւարայրում հայն ու պարսիկ ցիրուցան։
Խառնիճաղանճ գնդի միջից Քաջ Վարդանն է սլանում.
Նորա սուրը աջից, ձախից թշնամուն է կլանում։
Սարսափահար պարսիկները լեղապատառ փախչում են,
Նորա տեսքից զարհուրելով՝ միմեանց յետև թագչում են։
Սակաւաթիւ հայ քաջերը մահ են սփռում այդ ժամին.
Շուարել է, յոյսը կորել հայի գաժան թշնամին։

IX

Յանկարծ կռուի դաշտի միջին՝ Քաջ Վարդանի դէմուդէմ,
Դուրս է գալիս Վասակ Սիւնին, ոխը սրտում, չարադէմ.
Եւ Վարդանը նորա վերայ իւր աչերը սևեռեց,
Այդ հայեացքը դաւաճանին տեղն ու տեղը բևեռեց.
Նոքա նստած ձիու վերայ՝ ինչպէս երկու յաղթ արձան,
Կանգ են առել կռուի դաշտում, լռիկ, միջիկ ու անձայն։
Դաւաճանը իւր աչքերը դէպի ցած է ման ածում,
Իսկ Վարդանի արծուի տեսքը միշտ նորան է հալածում։

X

Հալուիր, մատնիչ. թող պատուի ոտքերիդ տակ խոր անդունդ.
Կորիր իսպառ, թող չյիշուի այս աշխարհում վատ անունդ։
Բայց ո՛չ, Վասակ. քո անունը մինչ յաւիտեան պիտ միայ,
Եւ կլինիս հայ բերանում նզովքների առարկայ։
Այդ հայեացքը քեզ կըսպանէ. փախիր, փախիր, դաւաճան.
Գնա հեռու, էլ չդառնաս, քեզ կըմերժէ Հայաստան...
Նա շուռ եկաւ և փախչում է՝ կնճիռները ճակատին.
Ամօթ ղգաց դաւաճանը, խիղճը խայթեց անդուլին...

XI

Իսկ Քաջ Վարդանն ախ քաշելով՝ շարքերի մէջ սլացաւ.
Նորա հատու ահեղ սուրը հարուածելով բթացաւ։
Սրաթռիչ արծուի նման խոյանում է նորա ձին
Եւ չէ թողնում Քաջի սրից ազատ պրծնել թշնամին։
Նա նժոյգի մէջքին նստած՝ նմանւում է հրեշտակի,
Ձափչփում է արնոտ դաշտը, հարուածելով շեշտակի։
Նորան տեսնող հայ քաջերը սիրտ են առնում, շունչ,
եռանդ,
Հուժկու բազկով ասպալում են պարսիկներին մոլեռանդ։

XII

Պատերազմի խառնուածքում յանկարծ մի նետ սուրալով,
Եկաւ, խոցեց մեր հերոսին. թափուեց արիւն ծորալով.
Նա յետ դարձաւ. և ով զարմանք. մթութեան մէջ դէմու-
դէմ՝
Կրճտում էր ատամները վասակ Սիւնին չարադէմ...
. . . . . .

XIII

Մութը պատեց ողջ աշխարհը, երբ սարսափած թշնամին
Փողն հնչելով՝ նշան տուեց պատերազմի վախճանին։
Կանաչազարդ դաշտի վերայ՝ անուշաբոյր ծաղկանց մէջ,
Ուր կարկաչող քաղցրիկ առուն միշտ անուշ է ել և էջ,
Հայ իշխաններն անմահ Քաջի չորս բոլորն են հաւաքուած.
Անբախտները յաղթութեան տեղ ժառանգել են սուգ ու լաց.
Արտասուաթոր և վշտագին խոնարհում են, մօտ գալիս,
Համբուրում են Քաջ Վարդանին, վերջին բարևն են տա-
լիս...

ՎԵՐՋՄԱՆ

(Մոգական պատկեր)

Պայթեց որոտ։ Ցաղթող գիշերն աստղերն արաւ ցիր ու ցան,
Եւ խաւարի մթին փէշերն անթիւ գանձի տէր դարձան։
Կայծակն ու շանթ զարդ կապեցին Աւարայրի ճակատին,
Եւ բոցավառ հուր թափեցին հսկայ սարի գագաթին։
Դղրդում են երկինք, երկիր և շառաչում մրրիկ, հողմ,
Դեռ բանում են խորունկ վէրքեր սուրն ու նիզակ անո-
ղորմ։
Վրէժխնդիր սլաքն ու նետ սաւառնում են վեր ու վար,
Եւ կիսամահ զոհերի հետ կրկին դառնում դէպի վար։
Անզօրավար քաջերն Հայոց առած սրտեր սէգ կորեան,
Վրէժխնդիր ոգով լեցուած՝ պահանջում են գինն արեան։
Լսուեց որոտ կրկին անգամ, և թնդացին սար ու քար.
Զարհուրելի, սոսկալի ժամ. ճեղքուեց երկնի սև կամար.
Կայծակնացայտ ամպի բոցում վառ փայլակը կանգ առաւ,
Եւ վարդանը նորա ծոցում՝ թագը գլխին դուրս ելաւ։
«Վրէժ, վրէժ ուրացողից», գոռաց քաջը զայրացած.
Որոտ պայթեց վերէն նորից և շանթն իջաւ դէպի ցած.
Բացուեց անդունդ կուռի դաշտում, սև ծուխն ելաւ դէպ
երկինն,
Եւ վոսի մէջ՝ արեան դաշտում, նոքա տեսան Վասակին։
Տղմուտ գետի արնոտ ալիք պլորւում են դէպի վար
Եւ թափւում են դաւաճանի գլխի վերայ անդադար...

Ցարութիւն Պետրոսեան

ՆՈՒԷՐ ԱՅՆ ԲԱՆԱՍՏԵՂԾԻՆ, ՈՐ ՈՒՐԱԽՈՒԹԻՒՆ ՉԻ ԵՐԳՈՒՄ*)

Ինարիդ լաբը ինչո՞ւ ողբաձայն սուգ է մրմնջում.
Ինչո՞ւ մշտապէս անյաղող բախտին անէծք է կարդում.
Վշտահար Սիրտդ ինչո՞ւ է այգեյան գալարւում, մաշւում.
Ինչո՞ւ Յոբի պէս պատահարներին դու չես դիմանում։

Կարծում ես ընդ միշտ ձմեռ պիտ լինի, գարունը չի՞ գալ,
Սոխակը վարդից կարօտ չի՞ առնիլ, չի՞ ուրախանալ.
Շուշան, շահոքրամ, մանիշակ, նարգիզ չ'պիտի տեսնենք.
Էլ չե՞ն ծաղկելու դաշտեր, հովիտներ, անտառներ լերինք։

Թող, ինչքան կուզէ, հիւսիսը փչէ, բուք բորեաղ անէ
Թող թափէ դաժան սառնամանիքները, թող մեզի տանջէ,
Բայց վերջը ինքը քնուԹեան առաջ պիտի Թուլանայ,
Միայն վատ անուն Թողնելով մեր մէջ պիտ կորչի գնայ։

Մի յուսահատիր ողբերգուԹեան մէջ, քաջացիր, պօէտ.
Հաւատաք, Յոյս և Սէր անբաժան հանապազ քեզ հետ
Ախիր քնարիդ ուրախ լարերին, ամբոխին յոյս տուր,
Շատ մի օրօրի, մի քնացնի, Թմրածին ձայն տուր։

—

*) Երբեք չը կարծէք, որ ես այս չորս տունս ոտանաւորով յանդգնում եմ մտնել բանաստեղծների շարքը, ո՛չ, սիրելի, դա իմ խելքի բանը չէ. դրանով ես ուզեցել եմ բողոքել այն բոլոր բանաստեղծների դէմ, որոնք շարունակ երգում են յուսահատած սուգ ու արտասուք, սիրահարուԹիւն, յուսահատուԹիւն, վիշտ, աղմոսերգուԹիւն և դառագան յուսահատացնող մտքեր։ Թող բանաստեղծի քնարը վեր դնէ աղմոսը, Թող երգէ ուրախ, համարձակ։ Թող մարակէ ցոփ և վեխ կեանք վարող կուսակրօնին. Թող գրիչը մխէ վաշխառուի կողը, Թող հրապարակ հանէ դիմակաւորներին, ոչխարադէմ գայլերին, դրամանական աստուածը իրանց գործերով անպատուողներին։ Բանաստեղծը հրապարակ հանէ մեր կեանքի մէջ դոյուԹիւն ունեցող հիւանդ մասերը։ Չը պէտք է շողոքորթել, այլ ապտակել. չը ծածկել՝ այլ հրապարակ հանել. չը քնացնել՝ այլ արԹնացնել։ Բայց ի հարկէ բանաստեղծը այդ բոլորը պիտի կատարէ հայրական բարեսրտուԹեամբ, անկեղծ բարեկամի ցանկուԹեամբ։

Սարիբէգ Տէր-Մելքիսեդեկեանց

XXXI ԱՂԲԻՒՐ-ՏԱՐԱԶԻ XXIV

1913 թ. յաւելուածներն ու պրէմիաները՝

I. *Ս. ՍԱՀԱԿ*: II *Ս. ՄԵՍՐՈՊ*: III Հայոց Վեհափառ Հայրիկը Օշականում: IV *ՎԵՀՐՓՐՈՒ ԲԺՄԻՐԼԵԱՆ*: (*18 գոյնով*) V *ԲԺՄԱՆ Ս. ՏԱՃԱՐԸ*: VI **Ս. ԷՋՄԻԱԾԻՆ 18-ՐԴ ԴԱՐՈՒՄ**: VII *ՎԵՀԱՓԱՌ ԲԺՄԻՐԼԵԱՆԻ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ*: VIII *ՈՍԿԻ ՀԱՅԱՄՏԱՆԻ*: IX *Վեհափառ Հայրիկեան Սանահնում*: X Իր շեախմբով: XI *ՃԱՆԱՊԱՐՀԻՆ*: XII *Ներսիսեան ուսումնարանի հիմնադրութիւնը*: XIII *ՇՐՋԱԳՈՒՅՐԸ ՍՄԵԱՀՆՈՒՄ*: XIV *ՊԱՏԳԱՄԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ*: XV Գեղափնջիկ-օրացոյց **1913 թ.** XVI *ՄԱՆԿԱՊԱՆ - ԱՇԽԱՐՀ*: XVII *ՏՕԲԻ ԵՒ ՄԱԼԻ*: XVIII *Թատրոն եւ Երաժշտութիւն*: XIX *ԱՌՈՂՋԱՊԱՀ*: XX *ԱՂԲԻՒՐԻ ԱԿՈՒՆՔ*: XXI *ՄԱՆԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ*: XXII Ինքնուրոյն սի պիէս: XXIII *Հազար-Տինգ-Հարիւր ամեակ Հայ գրի*: XXIV *Զորս-հարիւր ամեակ Հայ տպագրութեան*: XXV *ԽՕՍՔ ԵՒ ԳՈՐԾ*:

ԾԱՆՕԹ. №№ 1—15 պատկերները և Գեղափնջիկ օրացոյցը կուղարկուին Նոր-տարւայ №№-ի հետ, ինչպէս և պիէսներից մէկը: ՏՕԲԻ ԵՒ ՄԱԼԻՆ ու ՄԱՆԿԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ կը տպագրուին ԱՂԲԻՒՐԻՆ կից: Թատրոն եւ Երաժշտութիւնը ու Առաջապահիկը յոյս կը տեսնեն ՏԱՐԱԶԻՆ կից: Նախորդ տարիների համեմատութեամբ այս անցած տարւանից ընդարձակուած է թէ ԱՂԲԻՒՐԻ և թէ ՏԱՐԱԶԻ ծաւալը:

Բաժանորդագրութեան պայմաններ

ԱՂԲԻՒՐ տարեկան **3** *ր. (Արտասահման* **5** *ր.)* *ԱՂԲԻՒՐ-ՏԱՐԱԶ* *բոլոր յաւելուածներով եւ պրէմիաներով տարեկան* **10** *ր. (Արտասահման* **18** *ր. կամ* **50** *ֆր.)*

Դպրոցական աշակերտների համար

ԱՂԲԻՒՐ-ՏԱՐԱԶ *բոլոր* **25** *յաւելուածներով, պրէմիաներով տարեկան* **5** *ր.,* **ԱՂԲԻՒՐԸ** *առանց պրէմիաների* **2** *ր.*

Ազատիկ եւ մաս մաս բաժանորդագրութիւն չէ ընդունւում:

Հասցէն՝ Тифлис, Редакція „АГБЮР“ *կամ* „ТАРАЗ“.
Tiflis, (Caucase) Direction Agbür *կամ* Taraz.

Խմբագիր-հրատարակիչ՝ ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆ.

Тифлисъ, Тип. „Гермесъ“ Графская № 6. Телефонъ № 566.

ՀՐԱՒԷՐ

ԳՐԱԿԱՆ

ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ

ՍԱՂՕՆ

Ուրբաթ, յունուարի 3-ին, Գրական Գեղագիտական Սալոնի Նոր-տարեայ հերթական jour fixe-*ը նուիրուում է ԱՂԲԻՒՐԻ* XXX-*ամեակի առիթով, ԱՂԲԻՒՐԻ աշխատակիցների յիշատակին և պատուին կը կայանայ՝*

XXX № 12 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1912 XXX

I

ԿԱԲԱՐԷ ԲԵՐԿՐԱՆՔ

արուեստագէտների, գրականագէտների, լրագրողների եւ Աղբիւրի, Տարազի բաժանորդների երեխաների համար։ Այն երեխաները, որոնք կամենում են մասնակցել ԿԱԲԱՐԷ-ԲԵՐԿՐԱՆՔԻՆ երգով, նուագով, նկարով, արտասանութիւնով, պարով, պէտք է ներկայացնեն, իրանց լուսանկարի հետ, գրաւոր իրանց կատարելիքի ծրագիրը մինչև այս դեկտ. 30-ը։ Առանձին հրաւէր ոչոքի չէ ուղարկուելու և այսու հրաւիրուում են թէ Թիֆլիսի և թէ դրսի քաղաքների բոլոր աշխատակիցների և բաժանորդների երեխաները ու Աղբիւրի պատանի ընթերցողները։

Սկիզբը կլինի 6 ժամին կէսին։ Վերջը կլինի 9 ժամին կէսին։

II

ԿԱԲԱՐԷ ԿԾՏԱՄԲԱՆՔ

արուեստագէտների, գրականագէտների, գեղագէտների, լրագրողների, Աղբիւրի ու Տարազի բաժանորդների եւ նրանց ընտանիքների համար։ Խօսք ու վրայը Աղբիւրի շուրջ։ Ոչ մի շնորհաւորութիւն, ձօն, ուղերձ չը պիտի ընդունուին և այդ տեսակ ցոյցը պիտի ընդունուի իբրև արհամարհանք, ծաղր ու ծանակ Աղբիւրի, նրա գեկավարների և աշխատակիցների հասցէին։ Անվերջ կշտամբանք՝ դիտողութիւն, նկատողութիւն ու յանդիմանութիւն Աղբիւրի գեկավարների անկարողութեան, աշնորհքութեան, տհասութեան, անփութութեան ու անտարբերութեան շուրջ, Աղբիւրի գեկավարներից կընդունուեն մեծ ու անկեղծ գոհացումով։ Ոչոքի առանձին հրաւէր չի ուղարկուելու։



Սկիզբը կլինի 9 ½ ժամին։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Աւետիք Արասխանեան . . . . . Պատկեր
Մահզոյժ Ա. Արասխանեանի
Մի թերթիկ անցեալից . . . . . † Ա. Արասխանեան
Ա. Արասխանեանի ամենավերջին լուսա-
նկարը իր մակագրութիւնով . . . . Պատկեր
Արասխանեանի ծննդավայրը՝ Վ. Ագուլիս . Պատկեր
Սև ժամին (բանաստեղծ.) . . . . . Յ. Պետրոսեան
Ի մահ Գր. Արծրունու . . . . . Լ. Ր. Ս.
Գրիգոր Արծրունի . . . . . Պատկեր
Հազագիւտ հատիկներ . . . . . Լ. Մ.-Աղամեան
Օրդուբատ . . . . . Պատկեր
Երկու անգամ երկու չորս . . . . . Զ. Տ.-Գրիգորեան
Իմաստուն աղբայրներ (բոանիական հէ-
քիաթ) թարգմ. . . . . Գ. Բաբուրեան
Լուռ գիշեր . . . . . Զմորիլ
Մտքեր . . . . . Ռէն
Այգեպան (ոտանաւոր) . . . . . Վարսիկ
Կապոյտ կրակ . . . . . Ս. Սահակեանց
ՋԻԱՐՃԱԼԻՔ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԻՑ

Ներկայ №-ով լրանում է Աղբիւրի 30-ամեակը։ Նորատարեայ Աղբիւրի 31-րդ տարեշրջանի №-ը կուղարկուի բացառապէս նրանց, որոնք բաժանորդագրուած կը լինեն 1913 թ. համար։

—

Աղբիւրի ներկայ № 12-ի հետ ուղարկուում է առանց բացառութեան բոլոր բաժանորդներին. 1) Գրիգոր Արծրունի և 2) Աւետիք Արասխանեան (ինքնակենսագրութիւն)։

Խնդրում ենք ԱՂԲԻՒՐՆ ու ՏԱՐԱԶԸ տարածել հայ ընտանիքներում։